

# ԿԱԹՈՒԿՈՒԹՅՈՒՆԸ

## ՀԱՅՈՑ ՄԵՋ

Ազգային գաղափարախոսության չընկալման ու պատմական վայրիվերումների հետեւանքով, հայերը ոչ միայն առաքելական կամ լուսավորչական եկեղեցու, այլև ուրիշ հարանվանությունների, նույնիսկ աղանդների անդամ են: Այսպիսով, ինչ-որ իմաստով հայ քրիստոնեությունը բազմաձևավալ հասկացություն է դառնում կրոնական հարանվանությունների եւ միավորումների առկայությամբ: Հաճախ հայ կաթոլիկները կամ նրանց ժառանգներն իրենց հայ եկեղեցու բաղկացուցիչ մաս են համարում: Նրանք գերադասում են իրենց կոչել կաթողիկեներ (ժողովրդի մեջ նրանց նաեւ «ֆրանկ» են կոչում հռոմեադավան լինելու համար): Հիմնականում հայերը կաթոլիկություն են ընդունել Արեւմտյան Հայաստանում եւ Կիլիկիայում միսիոներական ակտիվ քարոզչությամբ կամ թուրքական բնաջնջման սարսափից խուսափելու նկատառումներով:

20-րդ դարի սկզբին կաթոլիկ հայերը Հայաստան ու Վրաստան են գաղթել Վանից, Ալաշկերտից, Կարսից, Կարին-Էրզրումից, Մուշից եւ այլն: Այժմ կաթոլիկ համայնքներ կան Շիրակի եւ Լոռու մարզերում, Ջավախքում, ինչպես նաեւ Ստամբուլում, Միջին Արեւելքի տարբեր երկրներում, Եվրոպայում եւ Մ. Նահանգներում: Ըստ Հայաստանի կաթողիկե եկեղեցու նախկին առաջնորդ Հ. Ներսես արքեպիսկոպոս Տեր-Ներսիսյանի «Պատմական ակնարկներ» աշխատության, 2002-ին Հայաստանում կային 30, Վրաստանում՝ 20 հայ կաթողիկե գյուղեր, մոտ 200 000 հավատացյալներով, ինչը խիստ չափազանցված է թվում: 1916-ին նույն այդ տարածքներում եղել են 70-ից ավելի հիմնականում քարաշեն եկեղեցիներ: Մինչ այդ, 1701-ին Իտալիայի Սբ. Ղազար

կղզում բարգավաճում էր առաքելական եկեղեցու նախկին սպասավոր Մխիթար Սեբաստացու ուխտի միաբանությունը, որ հանգրվանել էր կաթոլիկ եկեղեցու հովանու ներքո եւ ծավալում էր գիտամշակութային մեծավաստակ գործունեություն: Հետագայում, Մխիթարյան միաբանության պառակտման հետեւանքով մշակութային հզոր կենտրոն ստեղծվեց Վիեննայում:

Հայ կաթոլիկ եկեղեցու վարդապետ, Մխիթարյան միաբանության անդամ Հ. Հարություն վրդ. Պզտիկյանը կարելորելով Մխիթարյան միաբանության անուրանալի դերը եւ ժառանգությունը հայ մշակույթի անդաստանում, նրանց կաթոլիկ լինելու հանգամանքն այսպես է մեկնաբանում. «Այն ժամանակ մենք ստիպված էինք գրանցվել որպես կաթոլիկե համայնք, քանի որ Հայ առաքելական եկեղեցին իր փաստացի ներկայությունը չուներ Իտալիայում»: Նա պատմում է, որ դեռ խորհրդային տարիներին Հռոմի պապի եւ Վազգեն Ա հայրապետի միջեւ գրավոր համաձայնություն է հաստատվել, որ Հայաստանում կաթոլիկե թեմի եպիսկոպոսական առաջնորդի պաշտոնում հաստատվեն Մխիթարյան միաբանության անդամները: Հարցի մեկնաբանությունն ըստ հայր Հարությունի հետեւյալն է. «Մխիթարյանները ավելի ուսյալ են, բացի այդ առաջնորդը պետք է համայնքի հոգեւոր խնամքով զբաղի, անշուշտ, ներդաշնակությամբ Հայոց առաքելական եկեղեցու Շիրակի թեմի, եւ կարողանա դրսի «թթու» կաթոլիկ միսիոներների պառակտողական որեւէ գործողության հակակշիռ լինել»: Միաժամանակ, որքան էլ զարմանալի է, հայր Հարությունը հույս է հայտնում, թե երկու կրոնապետերի միջեւ հաստատված այդ կարգը վերանայվում է, քանի որ «Մխիթարյանները չեն ուզեր որեւէ վարդապետ զոհել: Մենք քիչ ենք, կուզենք, որ մեր վարդապետները՝ մեր ուխտին հավատարիմ, նվիրվեն գրական-մշակութային եւ կրթական գործունեության, այլ ոչ թե հովվական գործին»: Թե ինչքանով կշահի դրանից Հայաստանի կաթոլիկե համայնքը դժվար է ասել, սակայն վարդապետի ասածը կարծես

իրողություն է դառնում այն իմաստով, որ մահվանից երկու շաբաթ առաջ երջանկահիշատակ Հովհաննես Պողոս Բ պապը ստորագրել է Նշան արք. Գարաբերեյանի նշանակումը որպես կաթողիկե եկեղեցու Հայաստանի թեմի առաջնորդ, մինչդեռ վերջինս, ինչպես հայտնի է, Ջմմառու (Լիբանան) միաբանության անդամ է: Այլ խոսքով՝ խախտվել է համագործակցությունը հայ եւ կաթոլիկ եկեղեցիների միջեւ:

Անդրադառնալով առաքելական եւ կաթոլիկ համայնքների մանություններին ու տարբերություններին, հայր Հարությունը նշում է. «Պատկանելությունը պետք չէ շփոթել դավանանքի հետ, «կաթոլիկ» ասված հայերը նույն դավանանքն ու ծեսն ունեն, ինչ առաքելականները, բայց տարբեր նվիրապետությունների եւ դեկավարների կպատկանին»: Ի լրացում հայր Հարությունի, «Պատմական ակնարկներ»-ում կարդում ենք. «Հայ Կաթողիկե հոգեւորականները Հայաստանում եւ Վրաստանում նուիրուած են քրիստոնէական քարոզութեան, սուրբ հաւատքի ամրապնդման, Աւետարանի տարածման, եկեղեցական խորհուրդների մատակարարման եւ հայեցի դաստիարակութեան նուիրական գործին, մեր հայ կաթողիկե համայնքների մէջ, առանց երբեք հետապնդելու մարդորսական այլ նպատակներ, հարազատօրէն եղբայրական «էկումենիկ» ոգիով»: Իրավամբ գովելի խոսքեր, որոնց ցավոք, վերապահությամբ է պետք մոտենալ, եթե հիշենք կաթոլիկ հայերի պատրիարք, ամենապատիվ Տ. Հովհաննես Պետրոս Գասպարյանի 1992-ին հրապարակած «Վերադարձ Հայաստան» շրջաբերականը, որում կաթոլիկ պատրիարքը ոչ ավել, ոչ պակաս ժխտում է Հայ առաքելական սուրբ եկեղեցու վավերականությունը եւ կանոնական իրավունքը Հայաստանում: Ի պատասխան միջեկեղեցական պատշաճ հարաբերությունների համար մարտահրավեր համարվող, պառակտող ու քայքայիչ այս թղթի, նախկին կաթոլիկ, այժմ հանգուցյալ Պիոն Հակոբյանն ու Հայաստանյայց առաքելական եկեղեցու այն ժամանակ դեռ ծայրագույն վարդապետ Տ. Եզնիկ Պետրոսյանը

համահեղինակեցին «Հրավեր ողջամտության» աշխատությունը (հրատ. 1993 թ.): Գրքույկում համահեղինակները քաշում են պատմության վարագույրը եւ նկարագրում հայ կաթոլիկների պախարակելի մարդորսության իրական փաստերի ծովը Հայաստանում եւ Ջավախքում:

Գրքույկը վերջանում է այսպիսի տողերով. «Հայրենիքի մշտարթուն գաղափարը եւ ազգային եկեղեցին են, որ անհատի մէջ վառ են պահում ազգութեան ոգին»: Այնուհետեւ մեջբերվում են Ղ. Ալիշանի խոսքերը. «Կրօնք եւ Ազգասիրութիւն իրարմէ չեն կրնար բաժնել: Չգիտեմ թէ ազգատեաց ոք որպէ՞ս կրնայ մտնել յարքայութիւն երկնից» (Կենսագրութիւն հ. Ալիշանի, Վենետիկ, 1902):

Այնուամենայնիվ, հայ եւ կաթոլիկ եկեղեցիների անդամակցությունը համաշխարհային էկումենիկ շարժմանը, ինչպես նաեւ երջանկահիշատակ Հովհաննես Պողոս Բ պապի այցը Հայաստան, նաեւ ներկայիս Բենեդիկտ ԺԶ պապի խոր իմացությունը հայերի եւ հայկական հարցի մասին (չպետք է մոռանալ նաեւ նրա վերաբերմունքը Վազգեն Ա երջանկահիշատակ հայրապետի նկատմամբ, ում հակառակ թուրքական դեսպանատան հորդորների, 1981-ին հավուր պատշաճի հյուրընկալել էր Գերմանիայի թեմում կարդինալ եղած ժամանակ), հույս են տալիս ենթադրելու, որ երկու եկեղեցիների հարաբերություններն արդեն կայուն են եւ կշարունակեն զարգանալ ճշմարիտ քրիստոնեական ոգով: Իսկ Մխիթարյան հայերի նախանձախնդիր ու հարատեւ առկայությունը մեր կողքին կապահովի մեր կաթոլիկացած հայրենակիցների հոգեւոր եւ ազգային անվտանգությունը Հայաստան արշաված տարատեսակ աղանդներից ու բարքերից:

***ՍՈՒՍԱՆՆԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ***

---

## Survivors of The Armenian Genocide

### **KRISTINE HAGOPIAN**

*born 1906, Smyrna (Izmir)*

We had already been deported once, in 1915, sent towards Der-Zor. But, my uncle's friend had connections in the government and he had us ordered back to Izmir.

Orders came again that everyone must gather in front of the Armenian church to be deported. My father refused to go and told us not to worry. He didn't think the Turkish government would do anything to him, since he was a government employee himself. Twelve Turkish soldiers and an official came very early the next morning. We were still asleep. They dragged us out in our nightgowns and lined us up against the living room wall. Then the official ordered my father to lie down on the ground... they are dirty the Turks... very dirty... I can't say what they did to him. They raped him! Raped! Just like that. Right in front of us. And that official made us watch. He whipped us if we turned away. My mother lost consciousness and fell to the floor.

Afterwards, we couldn't find our father. My mother looked for him frantically. He was in the attic, trying to hang himself. Fortunately, my mother found him before it was too late. My father did eventually kill himself—later, after we escaped

### **SION ABAJIAN**

*born. 1908, Marash*

The crowds were huge in Meskeneh. We were in the middle of a vast sandy area and the Armenians there were from all over, not only from Marash. We had no water and gendarmes would not give us any. There were only two gendarmes for that huge crowd. Just two.

Wasn't there a single man among us who could have killed them? We were going to die anyway. Why did we

obey those two gendarmes so sheepishly?

The word was that from Meskeneh, we were going to be deported to Der-Zor. My father had brought along a tent that was black on one side and white on the other. Each time gendarmes approached us to send another group to Der-Zor, my father would move the tent. He would pitch it on the other side of the crowd—as far away as possible. We were constantly moving. He bought us quite a bit of time that way.

Eventually, we crossed the Euphrates River to Rakka where we found an abandoned house—with no doors or windows—and we squatted there. But we still had no food. We used to eat grass. We used to pick grains from animal waste, wash them and then in tin cans fry them to eat. We used to say: “Oh, mommy, if we ever go back to Marash, just give us fried wheat and it will be enough.”

### **EDWARD BEDIKIAN**

*born 1902, Sepasdia (Sivas)*

There was a girl, a girl who I had befriended on the road, earlier. Her name was Satenig. I remember her very well. She was not too strong. I saw her again in that basement. In the basement of the school where they had thrown us. She was there. She had a little bit of money and she gave it to me. “Don’t let them take me,” she said. “Don’t let them take me.” They would come around everyday and take whoever was dead or very weak. She was not in good shape, she was very weak. I stood her up and leaned on her. Held her up, so. They came. I was holding her up, leaning her up against the wall. But they saw her and took her... took her...